

գիմէ անդ, ուր որ բազմութիւնն խռնած է իւրաքանչիւր որ երկու ականջաց մէջ դրած ձայնագիր գործւոյն բազմութիւն հաղորդիչներէն երկուսն, լսելու համար դաշնակի երաժշտութեան կտոր մը. զոր կ'ամփոփեն ձայնագիր գործւոյն մէջ ընդարձակ և ուղիղ անկեամբ, ցաքարով մը, որոյ լայն բերանն կը կախուի դաշնակին վրայ, իսկ նեղ կողմն կը հաղորդուի գործւոյն:

Իսկ երբ կ'ուզեմք փշոզական գործեաց երաժշտութեան կտոր մը ամփոփել, բաւական է սովորական մեծ ցաքար մը, որոյ առջնն կեցած հնչեցընէ երաժիշտն իւր կտորն:

ՅԻՍՆԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱՐՈՒԵՍՏԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԹԵԱՆ



Տարւոյս Օգոստոսի 19ին (երկուշաբթի) լրացաւ այն օրն, յորում յիսուն տարի առաջ, զարմանալի դիպումով, երկուշաբթի օր մը ներկայացուց Սրակոյ Գաղղիոյ ճեմարանին և այնուհասարակաց՝ Արիէփսի և Դակէրի գիւտն, զոր իրենք զժբաղդարար շիրցան վայելել՝ իրենց քրտանց և ջանից արգասիքն: Այս հանդէսս տօնախմբելու համար մեծ պատրաստութիւն տեսնուեցաւ Փարիզու լուսանկարութեան ընկերութիւնէն, որում մասնակցեցան նաև Գաղղիոյ լուսագրական տպագրութեան ընկերութիւնն և ուրիշ շատ ընկերութիւնք, որոց նպատակն էր ծաղկեցընել ևս զևս քան լուսանկարութեան արուեստը:

Փարիզու Hôtel continental պանդոկին փառաւոր սրահին մէջ ճաշ մը տրուեցաւ հարիւրէն աւելի հրաւիրեալ անձանց, որոց նախագահ էր Պ. Յանսէն. հոն կը գտնուէր նաև Ք. Ա. Էտիսըն տաղանդաւոր և հնարագիւտ ամերիկացին, որ իւր ներկայութեամբն կը պատուէր դազմականսն, և զոր սակաւ մի յառաջ ներկայացուցած էր Պ. Յանսէն իւր Ուսման ճեմարանին ընկերակցաց: Բաժակն ըմպելու ժամանակ առիթ առնելով Պ. Յանսէն համառօտիւ այսպէս խօսեցաւ. «Տեսնելով զՊ. Էտիսըն ներկայ հանդիսիս յիսնամեայ տարեգարծի գաղղիական գիւտի մը, ինձ կը թուի թէ Ամերիկեան հանճարն մերինին ձեռն կ'ընձեռէ»: Յետոյ զեղեցիկ և ճարտասան բանիւր բացատրեց թէ ինչ բան է լուսանկարութեան յիսնամեայ տարեգարծ մը. իբր կ'պատկերի նկարեց զամենայն աղինս, որք կու գային իրենց յարգանքն մատուցանել այս հրաշալի գիւտոյն հեղինակաց, որոց նպատակն եղած էր ուսանել զէութիւն լուսոյ, ինչպէս որ Էտիսընին է ուսանել զէութիւն ձայնի: «Այն ժամանակ, յաւել զարձևալ Յանսէն, օտարականք այլ ոչ ևս պիտի գան երկրագնաց ճանապարհաւ՝ այլ օդաչու, և ուխտագնաց պիտի լինին ի Շալոն, և յետ ժամանակաց ի Menlo-park, ի տես այնքան հրաշալեաց մարդկային հանճարոյ:

Յետ ճարտասանական րանից Պ. Յանսենի խօսից՝ կարգն եկաւ Պ. Լարրումէի՝ Գեղարուեստից անսիին, որ աւելի ևս ընդարձակելով իւր նախընթացին գաղափարներն, յաւել ևս ըսելու թէ արուեստաւորաց և

լուսանկարչաց տարածայնութիւնն ոչ այլ ինչ պատճառէ յառաջ եկած էր, բաց եթէ սխալ հասկացումէ իրարու մտաց, և որ օր աւուր վերայ զգալապէս կ'աներևութանայ, արուեստաւորք ի ձեռն լուսանկարի կատարելով իրենց գլուխ գործոցն, ինչպէս որ ի ձեռն տպագրութեան կատարած են մեծամեծ խոհուն և գրող հեղինակք:

Պ. Լարրումէի յաջորդեցին խօսելու հետեւարար Պ. Դաւան՝ ի կողմանէ Լուսանկարչաց ընկերութեան և յետոյ Պ. Լեռն վիրալ յանուն Լուսագրական տպագրութեան, որոյ ներկայացուցիչն էր, քամեց բաժակը վասն վարչութեան, գովելով նորա ջանքն վասն զարգացման լուսանկարի արուեստի, ընդ նմին նաև ուրուագրութեան. և աւարտեց իրեն խօսքը յիշատակելով և յորդորելով զբազմակիսան ըմպել բաժակ մի ևս ի կենդանութիւն և յառողջութիւն Պ. Պելլիկոյի, որ հանդիսին պատուոյ նախագահն էր, և նոյն ժամանակ կարող չէր եղած գալ ի հանդէսն հիւանդութեան պատճառաւ:

Յետ որոց ելլելով Պ. Նիլդէն, անդամ Ստրէշուրի Ռատմականաց ճեմարանին, պատասխանեց ի զիմաց ամենայն օտարազգի հիւրոց Պ. Յանսենի բաժակին համար, ըսելով որ գաղղիական հանդէս մը համազգային հանդէս մ'է, Գաղղիա բովանդակ աշխարհի սիրտը լինելուն պատճառաւ:

Այս մտղթանաց և բաժակաց յաջորդեցին բանաստեղծական ոտանաւորքերթուածք: Բոլոր սեղանի միջոց սրահէն դուրս երաժշտութիւնն կը հնչէր: Ուրախութիւնն շատ երկայն տևեց, մինչև անցնելով նաև կէս գիշերը, հանդիսականաց թիւն շատ բազմաթիւ էր, և մանաւորապէս Պ. խոխսըն, որ շատ քուհ էր այսպիսի համակերական ընդունելութեան մը համար՝ զոր ըրաւ իրեն գաղղիական ազգը:

Երկրիս ներքին տաքութիւնն: — Սովորաբար կարծուի որ որչափ աւելի խոր կամ վար իշուի երկրի տակ, այնչափ աւելի կ'ըլլայ տաքութեան աստիճանն. այլ մօտերս Բրուսիոյ հանքաց օտտիկանն Հիւյսէն (Huyssen) Նշանակեց, որ Պեռլինու մօտ Սթեւենսպէրկի (Spevenberg) ծակուածին 3490 անգղիական ոտք խորութեան մէջ տաքութեան աստիճանն էր 107, 60 Հարիւրամանն Ներմաչափով, Սէքէն Վիցի (Seckenwitz) 3555՝ խորութեան 94, 50. Շլատեպախի (Schladebach) 5735՝ խորութեան 1340. Այս չափերէս կը հետեւեցնէ գիտնականն՝ թէ տաքութեան աւելնալն անկախ է խորութեան չափէն, և երկրաչափական կամ թուարանական հաստատ համեմատութեան տակ չընկնար:

Մատենաք ելլիլիդեայ. — Այս մօտ ժամանակներս Հնդկաստանի մէջ կարեւոր գիւտ մ'եղաւ. այսինքն է, Եւկլիդեայ զըքերն՝ որք ցարդ կորսուած կը համարուէին, բաց 'ի քանի մի պատառիկներէ՝ որոց հայերէն թարգմանութիւնն մասամբ 'ի լոյս ընծայեցաւ Բազմալէպ հանդիսարանի մէջ, գտնուեցաւ արդ 'ի Ժէյփօր անոնց թարգմանութիւնն 'ի Սանքրիթ լեզու: Կէքուար իշխանին ղրկած նուիրակ մը, Պ. Դհրուվա, այս նիւթոյս նկատմամբ յատուկ գրութիւն մը ներկայացուց Սրենջադիտաց ութերորդ համազգային ժողովոյն՝ որ գումաւ բեցաւ 'ի Ստրէշուր: